Հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարանների ստեղծում
«Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանը

Հայկանուշ Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայկական մշակութային ժառանգության կարևոր բաղկացուցիչներից է հայ պարբերական մամուլի տպագրությունը, որի պատմությունն սկսվում է 1794թ. Մադրասում Հարություն Շմավոնյանի «Ազդարար»-ի հրատարակությամբ: հայ մամուլի թվաքանակը տարբեր տվյալներով տատանվում է 3650-5000-ի միջակայքում: Ազգային գրադարանի մամուլի հավաքածուում հաշվվում է 3650 անուն: Երկու անուն 18-րդ դ., 332 անուն՝ 19-րդ դ. և մնացած անունները՝ 20-21դդ.: 3650 անուն պարբերականներից 2025 անուն հանդես ու 1625 անուն լրագիր: Դրանց մեջ են Ազդարար (Մադրաս,1794), Տարեգրություն (Վենետիկ, 1799), Արմենիա (Մարսել, 1885), Արշալույս Արարատյան (Զմյուռնիա, 1840), Բազմավեպ (Վենետիկ, 1843), Հանդես ամսօրյա (Վիեննա, 1887), Արծվիկ Տարոնո (Մուշ, 1863), Հյուսիսափայլ (Մոսկվա, 1858), Մշակ (Թիֆլիս, 1872) , Մուրճ (Թիֆլիս, 1889), Լումա (Թիֆլիս, 1896), և այլ արժեքավոր անուններ: 3650 անուններից 18-րդ դ Ազդարար և Տարեգրություն Լույս ընծայվելով որոշակի պարբերականությամբ՝ հանդեսները և թերթերը, հատկապես օրաթերթերը, շաբաթաթերթերը, հայկական կենտրոններում ու գավառներում կատարվող իրողությունները արձանագրել են վավերական արժանահավատությամբ: Պարբերականները անսպառ նյութ են պարունակում հայ ժողովրդի պատմության, հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի և այլ բնագավառների վերաբերյալ, և այդ առումով դրանք տարբեր հետաքրքրություններ ունեցող հետազոտողների համար համարվում են աղբյուրագիտական անփոխարինելի շտեմարաններ: Թերևս այդ է պատճառը, որ պահպանության առումով պարբերականները առավել խոցելի են, քան գրքերը: Ուստի այսօր հայկական մշակութային ժառանգության պահպանման, քարոզչության ու հանրահռչակման համար դրանց երկարաժամկետ պահպանության ապահովումը օրախնդիր հարց է:

Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանում (ՀԳԳ) 2010 թվականից սկսվել են գործընթացներ պարբերական մամուլի թվայնացման ուղղությամբ: Թվայնացվել են ակադեմիայի 13 անուն գիտական ամսագրերը, Ազգագրական հանդեսը (1896-1916թթ.), Էմինյան ազգագրական ժողովածուն (1901-1913թթ.), Լուման (1896-1911թթ.), (մոտ 250 հազար ամսագրային էջ), որոնք ազատ դիտման սկզբունքով հասանելի են գրադարանի կայքէջից:
Հայաստանի ազգային գրադարանում (ՀԱԳ) թվայնացման ընդգրկուն աշխատանքները ըստ էության սկսվեցին 2013 թվականից: Սա պայմանավորված է այն փաստով, որ նման մեծամասշտաբ և բարդ աշխատանքերի հաջող իրականացման համար հարկավոր է ունենալ բավարար հաշվողական հզորություններ, արագագործ թվայնացնող սարքեր և նյութերի երկարաժամկետ պահպանության համար մեծածավալ մեքենայական հիշողություն:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները ընթացան հետևյալ առաջնահերթ ուղղություններով

1. Գրադարանում առավել հաճախակի սպասարկվող պարբերականների վերլուծություն: Դրանք առավել բարձր ընթերցողական պահանջարկ ունեն և հետևաբար առավել վտանգված են
2. ՀԱԳ պարբերական մամուլի հավաքածուի ուսումնասիրում՝ նրա ամբողջականությունը, ֆիզիկական վիճակը պատկերացնելու նպատակով: Արդյունքում պարզվեց, որ ա/ ոչ բոլոր թերթերն ու ամսագրերն ունեն ամբողջական լրակազմ. Ավելին, անբարեխիղճ օգտվողները հաճախ կտրել-հանել են իրենց անհրաժեշտ նկարը կամ հոդվածը:
   բ/ մատենագիտական ձեռնարկների և քարտարանների տվյալները ոչ միշտ են համապատասխանում իրական պատկերին
   գ/ բացակայում է պարբերականների իրապես պակասավոր համարների, էջերի վերաբերյալ ճիշտ ինֆորմացիան. Հաճախ բացակայող համարներից շատերը գտնվում էին գրադարանի այլ ֆոնդերում

Արմենիա, Մարսել, 1885-1921					
Տարեթիվ	Պակասող համարներ	Գրադարանի այլ ֆոնդերում	Տրամադրել են այլ գրադարաններ	Պակասող էջեր	Մնաց լրացնելու
1885	NN2-4				NN2-4
1886	62,79	62 /գր./			N79
1895	51,57,64	51,64 /գր./			N57
1900	13	13 /գր./			-
1914	Տարեկան լրակազմը	Տարեկան լրակազմը	ԳԱԹ- NN 8		Տարեկան լրակազմը՝ բացի N8ը
1915	Տարեկան լրակազմը	Տարեկան լրակազմը	ԳԱԹ NN 27, 33-37,39-46, 1-22		NN 23-26, 28-32, 38

3. Համագործակցության հարթակների ստեղծում ՀՀ և արտասահմանյան այլ գրադարանների, ինչպես նաև սփյուռքի հոգևոր-մշակութային և կրթական կենտրոնների հետ: 2012-2013թթ. մի շարք համագործակցության պայմանագրեր են կնքվել ՀԱԳ և Չեխիայի, Ռումինիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Իրանի Ազգային գրադարանների, իսկ 2013թ. Նաև Բեյրութի հայկազյան համալսարանի միջև: Կողմերը պայմանավորվել են համատեղ ցուցահանդեսների, կազմակերպման, մատենագիտական ցանկերի կազմման և հրատարակման, ինչպես նաև հավաքածուների թվայնացման, փաստաթղթերի թվային պատճենների փոխադարձ տրամադրման վերաբերյալ:
4. Գրադարանային աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացում. Այդ նպատակով ՀՀ ՄՆ-ը արդեն երրորդ անգամ կազմակերպում է մարզային ու

համայնքային գրադարանավարների դասընթացներ, Վարպետաց դասեր: Արդեն մոտ 200 գրադարանավարներ մասնակցել են նշված դասընթացներին:

5. Բարձրարտադրողական տեխնիկական միջոցների ձեռքբերում

2012-2013թթ. Ազգային գրադարանի և «Հայաստան» համահայկական հիմնադրամի համագործակցության արդյունքում հաջողությամբ պսակվեց «Թվայնացման կենտրոնի և հանրային էլեկտրոնային ընթերցասրահի ստեղծում Ազգային գրադարանում» գործուն նախագիծը: Ծրագրի շրջանակներում արգենտինահայ բարերար Հովսեփ Թահթայի նվիրատվությամբ ձեռք բերվեցին առաջադեմ լայնաֆորմատ սքաներ /մոտ 85 հազար դոլար արժողությամբ/, 10 տերաբայթ ընդհանուր ծավալով արտաքին հիշողություն՝ սքանավորված նյութերը պահպանելու համար: Առանձին սրահ հատկացվեց Թամանյանական մասնաշենքի 2-րդ հարկում, որը վերածվեց էլեկտրոնային ընթերցասրահի: Սրահը համալրվեց վերջին սերնդի բարձրորակ 15 համակարգիչներով, որոնց վրա տեղադրվեցին օպերացիոն համակարգ և հիմնական ծրագրային փաթեթ: Համագործակցության փաթեթը ներառում է նաև տեխնիկական, ծրագրային սպասարկումը: Ծրագրի արժեքը 135 հազար դոլար է: Մեկամսյա դասընթացից հետո 2013թ. հուլիսից գրադարանավարները սկսեցին սքանավորել գրադարանի հավաքածուի պարբերականները առաջնահերթությունը տալով առավել սպասարկվող և վտանգված անուններին:

6. Գրադարանային գործում աշխարհում կիրառվող ծրագրային փաթեթների ուսումնասիրում

Պարբերական մամուլի երկարաժամկետ պահպանությունն ու գրադարանի օգտվողների տեղեկատվական սպասարկումը թվային ձևաչափերով ապահովելու նպատակով ՀԱԳ-ը և ՀԳԳ-ն 2013թ. սկսեցին համատեղ փորձարկել «Հայ մամուլ» էլեկտրոնային գրացուցակը: Որպես ծրագրային միջավայր ընտրվեց «Կոհա» համակարգը[1], որը նախագծված է գրադարանային գործընթացների ավտոմատացման համար և լայն տարածում ունի ողջ աշխարհում: Համակարգը համատեղելի է գրադարանագիտության և տեղեկատվական գիտության բնագավառներում ընդունված և գործող միջազգային ստանդարտներին, աշխատում է բազմալեզու միջավայրում, ունի նախագծողների և շահագործողների ակտիվ լսարան, և պատկանում է «Բաց կոդերով ծրագրերի» ընտանիքին:

Մշակվեցին ձևաչափեր պարբերականների նկարագրության ժամանակ *«Կլանված», «Զուլված». «Միացված» «Շարունակված», «Փակված»* նկարագրությունների, ինչպես նաև այլընտրանքային, զուգահեռ վերնագրերի ու ենթավերնագրերի, փոփոխված խորագրերի, երկլեզվյան, հայատառ թուրքերեն անունների, փոխված տպագրավայրերի համար: Ծանոթությունների դաշտում գրառվում են պարբերականի ուղղության, նպատակների ու խնդիրների մասին տեղեկություններ: Որոնման հնարավորությունները ընդլայնելու նպատակով պարբերականների անունների՝ դասական ուղղագրությամբ գրությանը զուգահեռ տրվում է նաև ժամանակակից ուղղագրությամբ տարբերակը՝ որպես այլընտրանքային վերնագիր:Պատրաստվեցին ամենագործածական դաշտերի և ենթադաշտերի հայերեն տարբերակները:

[1] http://koha-community.org/

ՀՀ Կառավարությունը առաջնահերթությունների ցանկում ներառել է հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարանների ստեղծումը՝ որպես ազգային մշակութային արժեքների ներկայացման, հանրահռչակման և համաշխարհային մշակութային ժառանգության մեջ հայկական ներկայության ներկայության ու տեղի վկայություն: Այդ ծրագրի բաղկացուցիչներից մեկը <Հայ պարբերական մամուլ> հանահավաք էլեկտրոնային ժտեմարանի ստեղծումն է: ՀՀ գրադարանները նույնպես մասնակցություն ունեն այս հիրավի համազգային նախաձեռնության մեջ: 2014 թ. մարտ ամսին ՀՀ Մշակույթի փոխնախարար Ներսես Տեր-Վարդանյանի հանձնարարականով և մասնակցությամբ կայացան երկու հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվեցին ու հստակեցվեցին շտեմարանի ստեղծման և համակարգման աշխատանքները: Երկրորդ հանդիպումը կայացավ ՀԱԳ-ում Երևանի խոշոր գրադարանների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման մասնակիցներն էին Հայաստանի ազգային, Ազգային մանկական, ԳԱԱ Հիմնարար գիտական, գիտատեխնիկական գրադարանների տնօրենները, համալսարանական գրադարաններից՝ ԵՊՀ, ՀՊՃՀ, ԵՊԼՀ, ԵՊԳՀ, Հայաստանի ագրարային համալսարանի գրադարանների պատասխանատուները, ներկայացուցիչ գիտաբժշկական գրադարանից: Հանդիպման ընթացքում մասնակիցներին ներկայացվեց աշխատանքը ամբողջությամբ, բացատրվեց դրա կարևորությունը և անհրաժեշտությունը, առաջարկվեց գրադարաններին իրենց ուժերի հնարավորության չափով մասնակցել շտեմարանի ձևավորման աշխատանքներին: Գրադարանները հայտնեցին իրենց պատրաստակամությունը մասնակցել պարբերական մամուլի թվային պատճենների մշակման աշխատանքներին (սա ամենաաշխատատար մասն է), եթե իրենց տրամադրվեն «Պենտիում 4»
համակարգիչներ: Նկարահանման աշխատանքները կիրականացվեն ՀԱԳ և ՀԳԳ գրադարաններում: Ելնելով պարբերական մամուլի մատենագիտական նկարագրության բարդությունից, որոշվեց որ համապատասխան վերապատրաստում անցնելուց հետո այդ նկարագրությունները կիրականացնի ՀԱԳ և ՀԳԳ մասնագետներից կազմված խումբը: Կազմակերպվեց ուսուցում շտեմարանի ձևավորման աշխատանքներում ընդգրկված գրադարանավարների համար:
Պարբերականների մատենագիտական գրառումների համար հիմք են հանդիսանում ՀԱԳ և ՀԳԳ հավաքածուները, իսկ որպես օժանդակ տեղեկատվական աղբյուր օգտագործվում են հայ մամուլի մատենագիտական ժողովածուները, առաձին ուսումնասիրություններ, հոդվածներ ևն: Սրան զուգահեռ պարբերականի մատենագիտական գրառմանը կցվում են ՀԱԳ և ՀԳԳ հավաքածուներում առկա միավորների աղյուսակները: Մեկ այլ, ավելի մեծ խումբ (նորից ՀԱԳ-ից և ՀԳԳ-ից), զբաղված է նկարահանված էջերի մշակմամբ և համացանցում տեղադրմամբ: Յուրաքանչյուր մատենագիտական գրառմանը կցված աղյուսակից ըստ տարիների, օրերի և համարների հասանելի են պարբերական մամուլի թվայնացված էջերը PDF ձևաչափով:

«Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանը հասանելի է http://tert.nla.am/ հասցեից: «Կարդալ առցանց» հղումից անցում է կատարվում աղյուսակին (տե՛ս Հավելված 1, կանաչ սլաքով նշված հղումը): Որպես լռակյաց արտածում մատենագիտական գրառումները արտածվում են դիտման «Նորմալ դիտում» ձևաչափով:

Հավելված 2-ում բերված է արտածման պատկերը երբ ակտիվացված է «MARC դիտում[2]» հղումը (տե՛ս կարմիր ներկված հատվածը)։ Հավելված 3-ում բերված է արտածման պատկերը երբ ակտիվացված է «ISBD դիտում[3]» հղումը (տե՛ս կարմիր ներկված հատվածը)։

Այս աշխատանքի արդյունքը արդեն իսկ գրավիչ է ընթերցողի համար։ Գրացուցակի «Կարդալ առցանց» հղման ներքո հասանելի են պարբերականի համարները և դրանց թվային պատճենները։ Օգտվողը առանց գրադարան այցելելու և պատվիրաթերթիկ լրացնելու կարող է ընթերցել իր հետաքրքրությունների շրջանակում գտնվող պարբերականի անհրաժեշտ նյութերը, ներբեռնել անհատական համակարգիչ կամ տպել։

Էրիվ տեքստային «Հայ մամուլ» շտեմարանը ամբողջացնելու համար աշխատանքների հետագա փուլերում նախատեսվում է ՀԱԳ և ՀԳԳ հավաքածուներում բացակայող համարները լրացնել ՀՀ-ի և արտերկրի գրադարաններում ու հայագիտական, հոգևոր, կրթական-մշակութային կենտրոններում առկա միավորների թվային պատճեններով՝ աղյուսակներում համապատասխան նշում կատարելով։ Գրադարանների կոդերն են

Կառույցի անվանում	Կառույցի կոդ
Հայաստանի ազգային գրադարան	ՀԱԳ
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան	ՀԳԳ
Երևանի Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ	Մ
Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան	ԳԱԹ
Վիեննայի Մխիթարյան միաբանություն	ՎՄՄ
Սուրբ Ղազար վանքի (Վենետիկ) մատենադարան	ՍՂՄ
Երուսաղեմի Կյուլպենկյան մատենադարան	ԵԿՄ
Հայ ազգային հիմնադրամ (Կահիրե)	ՀԱՀ
Սուրբ Էջմիածնի Վաչե և Թամար Մանուկյան Մատենադարան	ՍԷՄ
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարան	ԿԿՄ

2014թ. Հոկտեմբերի 1-ի դրությամբ «Հայ մամուլ» շտեմարանում տեղադրվել է 1600-ից ավելի մատենագիտական գրառում, որից 138 անուն պարբերականների համար /58 անուն լրագիր՝ 73.432 թվայնացված էջ, և 80 անուն հանդես՝ 691.971 թվայնացված էջ/ իրականացվել է էջերի թվայնացում։ Թվայնացված էջերի ընդհանուր գումարը՝ 765.403 էջ[4]։ Ազգային գրադարանի կայքէջում (www.nla.am) «*Թվայնացված պարբերականներ*[5]» հղման ներքո ներկայացված է «Հայ մամուլ» շտեմարանի ձևավորման դինամիկան աղյուսակով և դիագրամայով։ Տվյալները թարմացվում են շաբաթը մեկ։ Այս պահին ՀԱԳ և ՀԳԳ-ից նախագծին մասնակցում են 20 գրադարանավար։ Երկու խմբագիր իրականացնում են գրառումների ստուգումը։ ՀԱԳ և ՀԳԳ մատենագետները առնվազն շաբաթը մեկ կազմակերպում են համատեղ քննարկումներ շտեմարանի ստեղծման ընթացքում ծագած խնդիրները լուծելու նպատակով։
Թվային պատճենների ստեղծման աշխատանքներին մասնակցում են Հայ ազգային հիմնադրամը /Կահիրե/, որը տրամադրել է Արև լրագրի 1915-2000թթ. սքանավորած էջերը, Կիլիկիոյ կաթողիկոսության Մատենադարանը /Անթիլիաս/ , Մայր Աթոռ և ԳԱԹ-ը։Նրանց տրամադրած պատճեններից շտեմարանում տեղադրված են :

Թվային պատճենների ստեղծման աշխատանքներին մասնակցող գրադարաններ

[2] MARC = Machine readable cataloging = Մեքենաընթեռնելի քարտագրում
[3] ISBD = International Standard Bibliographic Description = Մատենագիտական նկարագրության միջազգային ստանդարտ
[4] Պետք է նկատի ունենալ որ 2010-2013 թթ. ընթացքում ՀԳԳ-ն թվայնացրել և համացանցում է տեղադրել մոտ 400 հազարից ավելի ամսագրային էջ։
[5] https://dl.dropboxusercontent.com/u/16623558/stat.pdf

N	Մասնակից գրադարաններ	Պարբերականի /անուն/	Էջերի ընդհանուր թիվը
1.	Հայ ազգային հիմնադրամ /Կահիրե/	1/Արև, 1915-2000թթ./	18.688
2.	Կիլիկիոյ կաթողիկոսության մատենադարան	2 /Մասիս, Կ. Պոլիս, 1852-1909թթ./262 էջ Արշալոյս Արեւելեան, Զմյուռնիա, 1841թ. 140 էջ	402
3.	Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մատենադարան	1 /Էջմիածին 2009-2014թթ./	3356
4.	ԳԱԹ	Արմենիա, Մարսել	70
5.	Գիտաբժշկական գրադարան	1	
6.			
7.			
8.			
9.			
10.			

Adobe Photoshop CS2 աշխատանքներին մասնակցող գրադարաններ

N	Մասնակից գրադարաններ	Պարբերականի /անուն/	Էջերի քանակ
1.	Խնկո –Ապոր անվ. Մանկական գրադարան	1+1	1417
2.	Ազգարային համալսարանի գրադարան	1+1	3078
3.	Կոտայքի մարզային գրադարան	1	
4.	Արագածոտնի մարզային գրադարան	1	
5.	Տավուշի մարզային գրադարան	1	
6.	ՀՊՃՀ գրադարան	1	
7.			
8.			
9.			
10.			

Թվային պատճենները տրամադրող գրադարաններ



ՀԱԳ-Հայաստանի ազգային գրադարան-284.453
ՀԳԳ- ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան -458.434 էջ
ՀԱՀ- Հայ Ազգային Հիմնադրամ (Կահիրե)- 18.688 էջ
ԿԿՄ-Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարան- 402
ՍԷՄ-Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վաչե և Թամար Մանուկյան Մատենադարան- 3356
ԳԱԹ-Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան - 70



1 անուն 18-րդ դ.
33 անուն 19-րդ դ.

15 անուն 19-20-րդ դդ.
147 անուն 20 և 21-դդդ.



2011-13թթ. հիմնականում ԳԱԱ ՀԳԳ կողմից թվայնացվել էր 435.763 էջ հիմնականում ակադեմիական հանդեսներ: 2014թ. Հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում թվայնացվել է 329.640 էջ: Այսպիսով, 2014թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ թվայնացվել է 196 անուն պարբերական ընդամենը 765.403 էջ, որից 58 անուն լրագիր /73.432 էջ/ և 138անուն ամսագիր 691.971էջ:

Հավելված 1

«Հայ պարբերական մամուլ» շտեմարան
«Արմենիա» լրագրի օրինակի վրա



1885	1886	1887	1888	1889	1890	1891	1892	1893	1894
1895	1896	1897	1898	1899	1900	1901	1902	1903	1904
1905	1906	1907	1908	1909					1914

1886																														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
I		41				42			43				44			45							46				47			48	
II			49			50				51			52				53			54				55			56				
III			57			58				59			60				61							63			64				65
IV			66				67			68				69			70				71			72							
V	73				74			75				76			77				78							80			81		
VI		82			83				84			85				86			87				88			89				90	
VII			91				92			93				94			95				96			97				98			99
VIII																					1				2			3			
IX	4			5				6			7				8			9				10			11				12		
X		13				14			15			16				17				18			19				20			21	
XI			22			23				24			25				26			27				28			29				
XII	30			31				32			33				34			35				36			37				38		


ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

Ա ՏԱՐԻ ԹԻՒ 58

1886 ՄԱՐՏ 6

(ՓԵՏՐՎԱՐ 22 Հ. Տ.)

ԷՋԱՔ

ԳԱՂԱՆԴԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱՆՆԵՐ

(rue Vacon, 50)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50).

Հավելված 2

«Հայ պարբերական մամուլ» շտեմարան

«Արմէնիա» լրագիր «MARC դիտում»

000 –LEADER fixed length control field 02965nas a22002297i 4500

003 - CONTROL NUMBER IDENTIFIER

control field AM-YeNLA

005 - DATE AND TIME OF LATEST TRANSACTION

control field 20140319114707.0

008 - FIXED-LENGTH DATA ELEMENTS--GENERAL INFORMATION

fixed length control field 121212d18851921Fe ||||| |||| 00| 0 arm d

040 ## - CATALOGING SOURCE

Transcribing agency AM-YeNLA

041 0# - LANGUAGE CODE

Language code of text/sound track or separate title arm

245 00 - TITLE STATEMENT

Title Արմէնիա :

Remainder of title Ազգային, քաղաքական լրագիր :

Statement of responsibility, etc Խմբ.-տնօրէն՝ Մ.Փորթուգալեան.

246 3# - VARYING FORM OF TITLE

Title proper/short title Արմենիա /

260 ## - PUBLICATION, DISTRIBUTION, ETC. (IMPRINT)

Place of publication, distribution, etc Մարսել :

Name of publisher, distributor, etc տպ.Մ. Փորթուգալեանի ,

Date of publication, distribution, etc 1885.

300 ## - PHYSICAL DESCRIPTION

Extent 4 էջ ;

Dimensions 45 x 31 սմ.

362 ## - DATES OF PUBLICATION AND/OR SEQUENTIAL DESIGNATION

Dates of publication and/or sequential designation 1885-1921

500 ## - GENERAL NOTE

General note «Արմենիա» թերթը հիմնադրվել է 1885 թ.-ին Մարսելում: Գրական և քաղաքական լրագիր է: 1907-1908 թթ.-ին խախտվել է պարբերականությունը: «Արմենիան» նկարագրել է արևմտահայերի ծանր վիճակը և նրանց պատրաստել ազգային-ազատագրական պայքարի: Արևմտահայերի կյանքի բարելավման գործում հույսեր չկապելով եվրոպական տերությունների հետ՝ թերթը ցույց է տվել նրանց շահախնդիր նպատակները Թուրքիայում և ընդգծել ազատությունը սեփական ուժերով ձեռք բերելու գաղափարը: Տպագրել է լուրեր արևմտահայ գավառների իրականության, Կ.Պոլսի ազգային վարչության գործունեության, հայ գաղթավայրերի մասին, անդրադարձել է արևելահայ իրականությանը և բողոքել ցարիզմի ազգային քաղաքականության դեմ: Քաղաքական-հասարակական բնույթի հոդվածների կողքին «Արմենիան» տպագրել է նաև բանասիրական և հայագիտական նյութեր, գեղարվեստական ստեղծագործություններ և այլն: 1890-ին «Արմենիա»-ին կից լույս է տեսել «Արմենիա»-ի հուշարար» հավելվածը:«Արմենիա» լրագրի տպագրությանը նախորդել է 1885թ. հունիսի 18-ին թվագրված՝ Մկրտիչ Փորթուգալյանի և Ֆելիքս Անֆանդյանի ստորագրությամբ ձեռագիր «Յայտարարութիւնը», որում խոսվում է պարբերականի բաժանորդագրության պայմանների, նպատակի և գաղափարական ուղղության մասին: Հայտարարության թվային պատճենը ևս կցվում է:

650 14 - SUBJECT ADDED ENTRY--TOPICAL TERM

Topical term or geographic name as entry element Քաղաքականություն

Form subdivision Պարբերականներ

Chronological subdivision XIX դ.

650 14 - SUBJECT ADDED ENTRY--TOPICAL TERM

Topical term or geographic name as entry element Հայագիտություն

Form subdivision Պարբերականներ

700 ## - ADDED ENTRY--PERSONAL NAME

Personal name Փորթուգալեան , Մ.

Relator term խմբ.

856 41 - ELECTRONIC LOCATION AND ACCESS

Uniform Resource Identifier http://tert.nla.am/mamul/Armenia/NLA.html

Հավելված 3

«Հայ պարբերական մամուլ» շտեմարան
«Արմէնիա» լրագիր «ISBD դիտում»

Արմէնիա : Ազգային, քաղաքական լրագիր : Արմենիա / Խմբ.-տնօրեն՝ Մ.Փորթուգալեան. - Մարսել : տպ.Մ. Փորթուգալեանի , 1885. - 4 էջ ; 45 x 31 սմ. - 1885-1921

«Արմենիա» թերթը հիմնադրվել է 1885 թ.-ին Մարսելում: Գրական և քաղաքական լրագիր է: 1907-1908 թթ.-ին խախտվել է պարբերականությունը: «Արմենիան» նկարագրել է արևմտահայերի ծանր վիճակը և նրանց պատրաստել ազգային-ազատագրական պայքարի: Արևմտահայերի կյանքի բարելավման գործում հույսեր չկապելով եվրոպական տերությունների հետ՝ թերթը ցույց է տվել նրանց շահախնդիր նպատակները Թուրքիայում և ընդգծել ազատությունը սեփական ուժերով ձեռք բերելու գաղափարը: Տպագրել է լուրեր արևմտահայ գավառների իրականության, Կ.Պոլսի ազգային վարչության գործունեության, հայ գաղթավայրերի մասին, անդրադարձել է արևելահայ իրականությանը և բողոքել

ցարիզմի ազգային քաղաքականության դեմ: Քաղաքական-հասարակական բնույթի հոդվածների կողքին «Արմենիան» տպագրել է նաև բանասիրական և հայագիտական նյութեր, գեղարվեստական ստեղծագործություններ և այլն: 1890-ին «Արմենիա»-ին կից լույս է տեսել «Արմենիա»-ի հուշարար» հավելվածը:«Արմենիա» լրագրի տպագրությանը նախորդել է 1885թ. հունիսի 18-ին թվագրված՝ Մկրտիչ Փորթուգալյանի և Ֆելիքս Անֆանդյանի ստորագրությամբ ձեռագիր «Յայտարարութիւնը», որում խոսվում է պարբերականի բաժանորդագրության պայմանների, նպատակի և գաղափարական ուղղության մասին: Հայտարարության թվային պատճենը ևս կցվում է:

Subjects--Topical Terms:

Քաղաքականություն--XIX դ.—Պարբերականներ- Թերթ

Հայագիտություն--Պարբերականներ